



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«26» 03 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 073 - 25

Նախաձեռնող՝

«ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 60/2

Գործունեությունը՝

Կապան համայնքի Վերին Խոտրանան բնակավայրում
կրթահամալիրի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 073 - 25

«26» Մայրի 2025թ.

**Սյունիքի մարզի Կապան համայնքի Վերին Խոտանան բնակավայրի 5-րդ փողոց,
25 հասցեում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Ավ կոմպանի» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Կապան համայնք, Վերին Խոտանան բնակավայր

Ներածական մաս. «Ավ կոմպանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Սյունիքի մարզի Կապան համայնքի Վերին Խոտանան բնակավայրի 5-րդ փողոց, 25 հասցեում 144 աշակերտի, 80 նախադպրոցական և մսուրային տարիքի երեխաների համար տիպային կրթահամալիրի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Կապանի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. օգոստոսի 16-ի N 136 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.53 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Վերին Խոտանան բնակավայրում՝ H45 միջպետական ճանապարհից մոտ 300 մ հեռավորության վրա: Կապան քաղաքից Վերին Խոտանան բնակավայրը գտնվում է 12 կմ դեպի հյուսիս: Տարածքի ամենաբարձր և ամենցածր նիշերի տարբերությունը կազմում է մոտ 20 մ:

Տարածքի արևելյան սահմանից 7-10 մ հեռավորության վրա տեղակայված են տեխնիկական նշանակության շինություններ: Մոտ 350 մ դեպի արևելք տեղակայված է 17-րդ դարում կառուցված սրճարանային կառուցվածք: Հյուսիսային և արևմտյան սահմանների մոտ շինություններ չկան: Տարածքի սահմանափակ ջրագծի ջրհավաքը (աղբյուր) տեղակայված է դեպի հյուսիս՝ 1137.7 մ հեռավորության վրա:

Դպրոցի տարածքում կառուցվող ծառափային բուսականություն, սակայն նոր կրթահամալիրի կառուցման ընթացքում ծառահատումներ չեն նախատեսվում: Բնության

հատուկ պահպանվող և պատմամշակութային հուշարձաններ հողատարածքում բացակայում են:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է «տաք» կլիմայական գոտում՝ օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +42.4°C, բացարձակ նվազագույնը՝ -22,1°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 75%:

Տարածքում տեղակայված է բնակավայրի գոյություն ունեցող դպրոցի շենքը /2077.68քմ/, որը կառուցվել է 1983թ. տիպային նախագծով՝ հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիայով երկհարկ շինություն՝ տանիքը պատված մետաղական թիթեղներով: Գոյություն ունեցող դպրոցի շենքը նախատեսվում է ապամոնտաժել է մինչ նոր դպրոցի կառուցապատման աշխատանքների սկսելը:

Կրթահամալիրի ծավալատարածական լուծումն իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից՝ երկհարկանի հիմնական դպրոցի մասնանաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից ու երկհարկանի մանկապարտեզից: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար, իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերը՝ 24.7մx18.0մ: Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Իսկ երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջը՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի սենյակ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոց: Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6x20.4 մ, որն օգտագործվելու է որպես թաքստոց: Նկուղային հարկում տեղավորվել են գրադարանը, խոհանոցը, բուժկետը, պահոցները, տղաների և աղջիկների սանհանգույցները, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան: Բոլոր հարկերն իրար հետ կապված են աստիճանների միջոցով և ունի հարկերը կապող միջհարկային ամբարձիչ հաշմանդամների համար:

Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսոլային ծավալն արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը: Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար:

Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից՝ չորս խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ: Երկրորդ հարկում նույն կազմն է՝ միայն վարիչի և բժշկի սենյակի փոխարեն ավելացել է հանդիսությունների սենյակ: Գլխավոր հատակագծով նախատեսված է արևային պանելների համար տարածք, որի համար տեղադրվելու է նոր լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան:

Բարեկարգման նախագծով՝ մանկապարտեզի խմբերի համար նախատեսված են շվաքարաններ, նստարաններ և աղբամաններ: Գոյություն ունեցող դպրոցի ներսի միաշիթ ցայտադրյուրը, նախատեսվում է տեղափոխել նոր դպրոցի մուտքի մոտ, ինչպես նաև նախատեսված է խաղադաշտ, խաղահրապարակներ, կանաչապատ տարածքներ, սպորտային հրապարակ: Գլխավոր հատակագծով մշակված են բոլոր արտաքին ինժեներական ցանցերի աշխատանքային գծագրերը՝ համաձայն տեխնիկական պայմանների: Կրթահամալիրը նախատեսվում է ցանկապատել:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 15300.00 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 2037.71 քմ,
- կրթահամալիրի մակերեսը՝ 0.00 նիշում՝ 1781.67 քմ,
- կանաչապատման գոտու մակերեսը՝ 9343.3 քմ,



- սպորտային խաղահրապարակներ՝ 946.25 քմ,
- մուր խմբի խաղահրապարակ՝ 121.67 քմ,
- մանկապարտեզի խաղահրապարակ տաղավարներ՝ 139.6 քմ:

Նախագծով իրականացվելու է տարածքի բարեկարգում, կանաչապատում, բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ, շվաքարաններ:

Դպրոցի տարածքում պահպանված են հակահրդեհային միջոցառումների համար անհրաժեշտ պայմանները, ապահովված են հրշեջ մեքենաների մոտեցման համար անհրաժեշտ ճանապարհները:

Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցի, երկու հարկանի մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման աշխատանքային նախագիծը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ: Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ռադիատորներ բացառությամբ սպորտսրահից, որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ: Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

Դասարանների և կաբինետների համար նախատեսված է ներածման-արտածման ռեկուպերացիոն սարքեր, որոնք տեղադրվելու են դասասենյակի արտաքին պատերին: Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով:

Նախագծով նախատեսվում է 110.2 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում՝ նոր կառուցվող կրթահամալիրին պատկանող տարածքի գրունտային մակերևույթին:

Ֆոտովոլտային կայանը բաժանվելու է 7 սեղանիկների, որոնցից 5 սեղանիկները բաղկացած են 30 ՖՎ վահանակներից, իսկ մնացած 2 սեղանիկը՝ 20 ՖՎ վահանակներից: ՖՎ վահանակների հենակառուցվածքն ուղղված է լինելու դեպի հարավ՝ հորիզոնի նկատմամբ՝ 30° անկյունով: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 190 հատ միաբյուրեղային 580 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 14 ՖՎ խմբի: ՖՎ կայանի փոխակերպիչները 2-ն են՝ 50 կՎտ պիկային հզորությամբ, որոնք մոնտաժվելու են ՖՎ հենակառուցվածքի վրա ձգման միջոցով: 1-ին փոխակերպիչին միանալու են 6 խմբեր, իսկ 2-րդին՝ 8 խմբեր:

ՖՎ կայանները միացվելու են կայանների հարևանությամբ կառուցվող հողանցման ցանցին:

Տաք ջրամատակարարման համակարգը սնվելու է նկուղային հարկում նախատեսված կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից:

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռացվելու է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին է միանալու կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ: Նախատեսվող կոյուղագիծը միանալու է տարածքում նոր կառուցվող կոյուղու մաքրման՝ «Топас 100» սարքավորմանը:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, դպրոցում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Քանդման աշխատանքներում նախատեսվում է՝ արտաքին պարուրող պատերի, ծածկի սալի, հիմքերի քանդում և տանց պարբեցման: Նախատեսվում է ապամոնտաժել հին դպրոցի բոլոր մասնաշենքերը: 2077.68 մ³ մասերեսով:



Քանդման աշխատանքներին զուգահեռ կազմակերպվելու է շինարարական աղբի կանոնավոր տեղափոխում: Այն տարածքում չի կուտակվելու, անմիջապես տեղափոխվելու է նախապես համայնքապետարանի հետ համաձայնեցված աղբավայր: Շինարարական աղբի ծավալը կկազմի մոտ 2300 մ³:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 24 ամիս:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կուունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 2600 մ³ շինաղբի տեսքով, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 26113 մ³ քանակով, որից կատարվելու է հետլիցք՝ 7800 մ³, մնացած 18313 մ³ հողային զանգվածը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները հանձնվելու են բնակչության անպահով խավերին, իսկ մնացածը՝ տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար խմելու կենցաղային ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (44 մարդ), ինչը կազմում է 716.3 մ³ /շին. ժամ. կամ 1.148 մ³ /օր: 15208 մ³ ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 6843.6 մ³ /շին. ժամ. կամ 15 մ³ /օր: Ընդհանուր ջրօգտագործումն ամբողջ ժամանակահատվածի համար կազմում է 7979.9 մ³ /շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ թխկի սրատերև կարմիր՝ 23 հատ, գնդաձև իլենի՝ 55 հատ, սյունաձև թույա՝ 82 հատ, բարդի արծաթափայլ՝ 67 հատ, սիզամարգ՝ 9343.3 քմ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումն իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ՝ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման ջրապահանջը կազմում է 19620.93 մ³ /տարի:

Ոռոգման համակարգը սնվելու է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվելու է մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը: Ավելցուկային ջրերի հեռացման համար նախատեսված է որոնաժայի հորատանցք:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը, օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության

պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Ինչը ներառում է՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ.

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Սյունիքի մարզի Կապան համայնքի Վերին Խոտանան բնակավայրի 5-րդ փողոց, 25 հասցեում կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում լանջաֆոտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում, դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշիվ բարեկարգ և ժամանակակից բացօթյա մարզադահլիճների, բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքային ու ուսումնական գործընթացները կազմակերպել և անցկացնել առավել անվտանգ բարեկարգ և հաճելի միջավայրում:



Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Սյունիքի մարզպետարանը, Կապանի համայնքապետարանը, Վերին Խոտանան բնակավայրը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Սյունիքի մարզի Կապան համայնքի Վերին Խոտանան բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը, ինչպես նաև պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Կառուցապատման աշխատանքներն իրականացնելիս խստագույնս հետևել անվտանգության կանոններին և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ դպրոցականների մուտքը շինհրապարակ բացառելու նպատակով:

- Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կապանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Ավ կոմպանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Վերին Խոտանան բնակավայրի 5-րդ փողոց, 25 հասցեում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Արմինե Վարդանյան